



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19076

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 301-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԿԳ/178-Ա

ՓԱՍՏԱՔԱՆ ԱՐՏԱԿ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Մեծլումյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի, քննության առնելով փաստաբան Արտակ Խաչիկյանին (արտոնագիր՝ թիվ 779) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Գարեգին Կարապետյանը (**այսուհետ, նաև՝ Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ 2017 թվականին դիմել է փաստաբան Արտակ Խաչիկյանին վճարովի իրավաբանական ծառայություններ մատուցելու համար: Փաստաբանը խնդրին ծանոթանալուց հետո հանձն է առել պաշտպանել իր շահերն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, որի կապակցությամբ կնքվել է պայմանագիր և իր կողմից փաստաբանին վճարվել է ընդհանուր 200.000 ՀՀ դրամ, իսկ մինչ այդ խորհրդատվության համար վճարել է 30.000 ՀՀ դրամ:

Դիմողը նաև նշել է, որ իր առաջարկով փաստաբանը հետագայում նաև հանձն է առել իր փեսա Կ.Սահակյանի գործը՝ Իջևանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի վերաբերյալ, որի համար ստացել է ևս 200.000 ՀՀ դրամ: Սակայն, միջև նշված գործով նախնական դատական նիստը սկսվելը Կ.Սահակյանը մահացել է, իսկ գործի առավել շահեկան ելքի համար փաստաբան Արտակ Խաչիկյանի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ կարճել գործը և 6 ամիս հետո Դիմողի քրոջ, հանգուցյալ Կ.Սահակյանի կնոջ՝ Աստղիկ Կարապետյանի կողմից ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո, վերջինիս անունից դատարան նմանատիպ հայցադիմում ներկայացնել վերաբերյալ: Մինչդեռ, նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո փաստաբանն աշխատանք չի կատարել և բացակայել է 2 դատական գործերով հետագա բոլոր նիստերից:

Գարեգին Կարապետյանը դիմումում նաև նշել է, որ այնուհետև իրեն չի հաջողվել կապ հաստատել փաստաբանի հետ, քանի որ նրա գրասենյակը փակ է եղել, իսկ կապի միջոցները՝ անհասանելի:

Վերոգրյալի կապակցությամբ Դիմողը խնդրել է միջոցներ ձեռնարկել փաստաբան Արտակ Խաչիկյանին հայտնաբերելու, երկու դատական գործերով նրան փոխանցված փաստաթղթերը և համապատասխան պայմանագրերով նրան վճարված գումարները վերադարձնելու, ինչպես նաև կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դիմումին կից ներկայացվել են Գարեգին Կարապետյանի և Աստղիկ Կարապետյանի կողմից փաստաբան Արտակ Խաչիկյանին ուղղված դիմումների պատճենները:

01.07.2019 թվականին Պալատում մուտքագրվել է Աստղիկ Լևոնի Կարապետյանի դիմումը, որով վերջինս խնդրել է սույն կարգապահական գործի շրջանակներում իրեն ներգրավել որպես դիմող (**այսուհետ, նաև՝ Դիմող**):

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 29.04.2019թ. թիվ 151-Ա/ԿԳ-19076 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Արտակ Խաչիկյանի (արտոնագիր՝ թիվ 779) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների պահանջների խախտման հատկանիշներով:

03.05.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմող Գարեգին Կարապետյանը ներկայացրել է բացատրություն՝ ըստ էության վերահաստատելով դիմումով իր կողմից ներկայացված պնդումները: Դիմողը նաև հավելել է, որ փաստաբանն իր կողմից ներկայացված բացատրությամբ չի ժխտել իր կողմից գումարի ստացման հանգամանքը, բացի այդ, թեև վերջինս պատրաստակամություն է հայտնել ներկայանալ 08.01.2019 թվականին հրավիրված դատական նիստին, սակայն այդ նիստին ևս չի ներկայացել, ինչպես նաև դրանից հետո երկու գործերով տեղի ունեցած նիստերին, չի ներկայացրել որևէ բացատրություն դրա վերաբերյալ և չի պատասխանել իրեն ուղղված զանգերին և դիմումներին:

Դիմող Աստղիկ Կարապետյանը Խորհրդի նիստին ներկայացրել է իր դիքորոշումը՝ ըստ էության հայտնելով, որ փաստաբան Արտակ Խաչիկյանը հավաստիացրել է իր եղբորը, որ վեց ամից անց, երբ իր ամուսնու մահից հետո ինքը կհանդիսանա ժառանգության իրավունքի սեփականատեր, ինքը կարող է ամուսնու վերաբերյալ գործով

որպես հայցվոր հանդես գալ, սակայն փաստաբանը պարտավոր էր իմանալ, որ ինքը չի կարող գործով որպես հայցվոր հանդես գալ, ինչի արդյունքում գործն ընթացել է սխալ ուղղությամբ:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի քննությանը Պատասխանողը չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

08.01.2019 թվականին ներկայացված բացատրությամբ Պատասխանողը չի ընդունել դիմումում նշված հանգամանքները՝ նշելով, որ ըստ Դիմողի՝ իր և Դիմող Գարեգին Կարապետյանի միջև կնքված պայմանագրի առարկան եղել է միայն թիվ SԴ1//0641/02/17 քաղաքացիական գործով դատարանում նրա շահերը ներկայացնելու պայմանը, մինչդեռ պայմանագրի կնքման ժամանակ նշված գործը դեռևս հարուցված չէր, իսկ իր կողմից պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ կատարվել են: Ինչ վերաբերում է դատական նիստերին չներկայանալու վերաբերյալ Դիմողի փաստարկներին, ապա փաստաբանը նշել է, որ իրեն գործով դատական ծանուցագիր չի հանձնվել, իսկ հրավիրվող դատական նիստերի մասին ինքը կարող էր տեղեկանալ միայն Դիմողից: Ավելին, 24.08.2018 թվականի դատական նիստին ներկայացել է, որը հետաձգվել է՝ նախագահող դատավորի հիվանդության պատճառով: Փաստաբանը նաև նշել է, որ գործի քննությունը դեռևս ընթացքի մեջ է և պատրաստականություն է հայտնել ներկայանալ հաջորդ դատական նիստին:

Դիմող Աստղիկ Կարապետյանի մասով փաստաբանը նշել է, որ ինքը վերջինիս վերաբերյալ գործով իրականացրել է ներկայացուցչություն, մինչդեռ իրավահաստատող փաստաթուղթ, այդ թվում՝ լիազորագիր վերջինիս կողմից իրեն ներկայացված չի եղել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Նախապատրաստողը 01.07.2019թ. կազմել է եզրակացություն, որում, թվարկելով գործով ապացուցման ենթակա հանգամանքները, նշել է, որ փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է խորհուրդը:

Գործը խորհրդին է հանձնվել 04.07.2019թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 24.09.2019թ. ժամը 18:30-ին և 10.12.2019 ժամը 18:15-ին թվականին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու*

արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապարաստողի եզրակացությունը՝ հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Պատասխանող փաստաբան Արտակ Խաչիկյանը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ՏԴ1/0641/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում հանդիսացել է Դիմող Գարեգին Կարապետյանի ներկայացուցիչը:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Դիմողի բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված 01.06.2017 թվականին կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով:

- Պատասխանող փաստաբան Արտակ Խաչիկյանը Դիմող Գարեգին Կարապետյանի շահերի ներկայացումն իրականացրել է ոչ պատշաճ կերպով, այն է՝ չի ներկայացել թիվ ՏԴ1/0641/02/17 քաղաքացիական գործով 07.12.2017 թվականին, 23.07.2018 թվականին, 12.11.2018 թվականին հրավիրված դատական նիստերին:

Նշված փաստը հաստատվում է համապատասխան դատական նիստերի ձայնագրություններով, «Դատալեքս» տեղեկատվական համակարգի տվյալներով, Դիմողի դիմումով, Դիմողի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղականքի համաձայն՝ Արտակ Խաչիկյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թվականից, 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Պալատի խորհրդի 03.10.2016թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ Արտակ Խաչիկյանի նկատմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ վերջինիս նկատմամբ արտոնություն կիրառելու հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը, լսելով Դիմողների բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Արտակ Խաչիկյանը դիմող Գարեգին Կարապետյանի մասով թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում, Կանոնագրքի 3.6.1 ենթակետի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման, իսկ դիմող Աստղիկ Կարապետյանի մասով Արտակ Խաչիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Խորհրդի պատճառաբանությունը դիմող Գարեգին Կարապետյանի մասով. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների

ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս... պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն:

Նույն սկզբունքների 15-րդ կետի համաձայն՝ փաստաբանները պետք է մշտապես լինեն լոյալ իրենց վստահորդների նկատմամբ և հարգեն իրենց վստահորդների շահերը:

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխիղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը: Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխիղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխիղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Կանոնագրքի 3.1.8 իրավադրույթը փաստաբանից պահանջում է իր մասնագիտական գործունեությունը նպատակաուղղել բացառապես իր վստահորդի շահերի պաշտպանությանը՝ ներառյալ վստահորդին իրավական օգնություն ցույց տալ ժամանակին, այսինքն՝ այն ժամանակ, երբ վստահորդն իր փաստաբանի օգնության կարիքն ունի: Փաստաբանի կողմից իր վստահորդի շահերի պաշտպանությունն ուշացած իրականացնելը, երբ վստահորդի համար վրա են հասել անբարենպաստ իրավական և փաստական հանգամանքներ, հավասարեցվում է վստահորդին իրավական օգնություն ցույց տալու փաստաբանի պարտականության չկատարմանը: Հետևաբար, փաստաբանը պարտավոր է գործել ազնիվ և բարեխիղճ և եթե զբաղվածության և իր կողմից

վստահորդին մատուցվելիք իրավաբանական ծառայությունների որակի վրա բացասաբար ազդող այլ հանգամանքների ազդեցությամբ չի կարողանալու պատշաճորեն իրականացնել իր մասնագիտական գործառույթները, պետք է հրաժարվի անձի իրավունքների ներկայացուցչությունը և (կամ) պաշտպանությունն ստանձնելուց:

Մասնագիտական բարեխղճության սկզբունքի խախտում է հանդիսանում փաստաբանի ցանկացած այնպիսի վարքագիծ, որը դրսևորվում է վստահորդին փաստաբանական ծառայության ուշացած մատուցմամբ կամ ընդհանրապես չմատուցմամբ, զբաղվածության կամ այլ պատճառներով վստահորդին որակյալ իրավաբանական օգնության տրամադրման անհնարինության գիտակցմամբ՝ վստահորդից հանձնարարության ընդունմամբ և վստահորդին վերջինիս գործի ընթացքի մասին չտեղեկացմամբ կամ պարբերաբար չտեղեկացմամբ, ինչպես նաև վստահորդի հարցերին ըստ հնարավորին սպառիչ և ինֆորմատիվ չպատասխանելով:

Տվյալ պարագայում Պալատը հաստատված է համարում այն փաստը, որ փաստաբան Արտակ Խաչիկյանի և Դիմող Գարեգին Կարապետյանի միջև 01.06.2017 թվականին կնքված վճարովի իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով փաստաբանը պարտավորվել է Դիմողին մատուցել իրավաբանական ծառայություններ, այդ թվում՝ իրականացնել ներկայացուցչություն: Մինչդեռ, փաստաբանը, թիվ ՏԴ1/0641/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում հանդիսանալով Դիմող Գարեգին Կարապետյանի ներկայացուցիչը, վերջինիս շահերը ոչ պատշաճ կերպով է ներկայացրել, այն է՝ չի ներկայացրել նույն քաղաքացիական գործով 07.12.2017 թվականին, 23.07.2018 թվականին, 12.11.2018 թվականին հրավիրված դատական նիստերին:

Ինչ վերաբերում է փաստաբանի՝ գործով հրավիրված դատական նիստերի վերաբերյալ տեղեկացված չլինելու վերաբերյալ պատճառաբանությանը, ապա այն հիմնադրվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր վստահորդի շահերի պաշտպանությունը ստանձնելու պայմաններում հենց վերջինս է պարտավոր այդ ուղղությամբ անհրաժեշտ և բավարար միջոցներ ձեռնարկել: Ուստի դատական նիստերի վերաբերյալ իրեն տեղեկացնելու պարտականությունը որևէ կերպ չի կարող դրվել իր վստահորդի վրա:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պալատը գտնում է, որ Պատասխանողի կողմից խախտվել են տվել ***Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջները:***

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հեղաբարձորող հարցերին:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պարզվիրապրոին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ դիմողը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք Պալատի մոտ կարող են ձևավորել ողջամիտ համոզմունք, որ դիմումում նշված փաստական հանգամանքներն իրականում տեղի են ունեցել, և առկա է կարգապահական գործով պատասխանող փաստաբանի կողմից թույլ տրված՝ Օրենքով և Կանոնագրքով արգելված արարք: Եթե դիմողը չի կատարում իր նշյալ վարույթային պարտականությունը, ապա կրում է դրա բացասական հետևանքը՝ փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կարճման տեսքով:

Պալատը գտնում է, որ Դիմող Գարեգին Կարապետյանի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման մասին: Մասնավորապես, կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը չի ապացուցել, որ փաստաբանի հետ կնքված պայմանագիրը լուծվել է, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ քննարկել վերջինիս արարքում Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին (պայմանագիրը լուծելիս փաստաբանի կողմից վստահորդին չմատուցված ծառայությունների համար հոնորարի համապատասխան մասը չվերադարձնելը) և 3-րդ (պայմանագիրը լուծելիս փաստաբանի կողմից վստահորդին համապատասխան փաստաթղթերը չվերադարձնելը) պարբերությունների խախտման հարցը: Բացի այդ, Դիմողը չի ապացուցել նաև, որ փաստաբանը խուսափել է գործի մասին տեղեկացնելուց և վստահորդին հետաքրքրող հարցերին պատասխանելուց: Խորհորդն արձանագրում է, որ Դիմողը՝ որպես կարգապահական վարույթի կողմ, պարտավոր է նշված հանգամանքներն ապացուցել: Հետևաբար, Պալատը գտնում է, որ Պատասխանողի կողմից վերոգրյալ դրույթների խախտման փաստը հանդիսանում է չապացուցված:

7.2. Խորհրդի պատճառաբանությունը դիմող Աստղիկ Կարապետյանի մասով.

Դիմող Աստղիկ Կարապետյանն ըստ էության հայտնել է, որ փաստաբան Արտակ Խաչիկյանը հավաստիացրել է իր եղբորը, որ վեց ամից անց, երբ իր ամուսնու մահից հետո ինքը կհանդիսանա ժառանգության իրավունքի սեփականատեր, ինքը կարող է ամուսնու վերաբերյալ գործով որպես հայցվոր հանդես գալ, սակայն փաստաբանը պարտավոր էր իմանալ, որ ինքը չի կարող գործով որպես հայցվոր հանդես գալ, ինչի արդյունքում գործն ընթացել է սխալ ուղղությամբ:

Հիմք ընդունելով սույն որոշման 7.1-րդ կետում ներկայացված՝ ապացուցման պարտականության բաշխման վերաբերյալ դրույթների վերլուծությունները՝ Խորհուրդը գտնում է, որ Դիմող Աստղիկ Կարապետյանի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման մասին: Մասնավորապես, կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը չի ներկայացրել փաստաբանի հետ կնքված՝ իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր (կամ այդպիսին կնքված լինելու վերաբերյալ ապացույց), որպիսի պայմաններում միայն

հնարավոր կլինեն պարզել փաստաբանի՝ Դիմողին իրավաբանական ծառայություններ մատուցելու պարտավորության առկայությունը, առկայության դեպքում՝ մատուցվելիք ծառայությունների բնույթն ու ծավալը, և դրա արդյունքում միայն գնահատել փաստաբանի կողմից վերջինիս ոչ բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու հանգամանքը, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի, 3.8.5 ենթակետի 1-ին (պայմանագիրը լուծելիս փաստաբանի կողմից վստահորդին չմատուցված ծառայությունների համար հոնորարի համապատասխան մասը չվերադարձնելը) և 3-րդ (պայմանագիրը լուծելիս փաստաբանի կողմից վստահորդին համապատասխան փաստաթղթերը չվերադարձնելը) պարբերությունների խախտման առկայությունը: Խորհորդն արձանագրում է, որ Դիմողը՝ որպես կարգապահական վարույթի կողմ, պարտավոր էր անել: Հետևաբար, Պալատը գտնում է, որ Պատասխանողի կողմից վերոգրյալ դրույթների խախտման փաստը ևս հանդիսանում է չապացուցված:

7.2. Խորհրդի կողմից կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, համաչափության հիմնարար սկզբունքը, ինչպես նաև փաստաբան Արտակ Խաչիկյանի անձը բնութագրող հանգամանքները:

Սույն պարագայում փաստաբանին կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համաչափությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս փաստաբանի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և փաստաբանի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ փաստաբան Արտակ Խաչիկյանն իրեն մեղադրվող արարքը կատարել է դիտավորությամբ, չի ներկայացել իր վերաբերյալ կարգապահական գործի քննությանը և կատարվածի համար չի զղջացել, վերջինիս վարքագծի հետևանքով տուժել են իր վստահորդի հիմնարար իրավունքներն ու օրինական շահերը, խաթարվել է վերջինիս՝ արդար դատաքննության հիմնարար իրավունքը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝...2) խիստ նկատողություն:*

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝

հավաստելու համար, որ վերջինիս կատարած արարքը հանդիսանում է էական կարգապահական խախտում, իսկ Պատասխանողի մեղքի բնույթն ու աստիճանը հիմք են նրա նկատմամբ կիրառելու «խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Սույն հանգամանքները վկայում են նաև այն մասին, որ առկա է համաչափություն Պալատի խորհրդի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտակ Խաչիկյանին (արտոնագիր՝ թիվ 779) դիմող Գարեգին Կարապետյանի մասով ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.6.1 ենթակետի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման մասով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Արտակ Խաչիկյանի (արտոնագիր՝ թիվ 779) նկատմամբ դիմող Աստղիկ Կարապետյանի մասով Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների պահանջների խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

3. Փաստաբան Արտակ Խաչիկյանի (արտոնագիր՝ թիվ 779) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան

**10 դեկտեմբերի 2019թ.
թիվ ԿԳ/178-Ա
ք. Երևան**